

ՔՈՒՐԳ ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ԿՈՒՄԱԿՅՈՒԹՅՈՒՆ. ՏԵՂԱԿԱՆ ԱՀԱԲԵԿԶԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ, ԹԵ՞ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻԱՎՈՐ

Մ.Ե. Մայիլյան

Վ. Բրյուսովի անվ. պետական համալսարան

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Չորվածուններկայացվում է Թուրքիայում տեղակայված տեղական ահաբեկչական կազմավորման՝ Քուրդ աշխատավորական կուսակցության ստեղծման պատմական, գաղափարական հիմքերը, նպատակները, մարտահրավերներն ու թուրքական կառավարության վարած քաղաքականությունը նրանց գործունեության դեմ: Սիրիական հակամարտության մեջ քրդերի ներգրավումը առիթ էր տարածաշրջանում դիրքերն ամրապնդելու համար: Սա դարձավ Թուրքիայի վարած քաղաքականության հիմքը, որի նպատակն էր խոչընդոտել քրդերի առաջխաղացումը:

Բանալի բառեր. տեղական ահաբեկչություն, Քրդեր, ՔԱԿ, Սիրիական հակամարտություն

Մերձավոր ու Միջին Արևելքի քրդական զարգացումների դաշտում գերազանցապես գերիշխում են երեք քաղաքական ուժեր՝ Թուրքիայի Քրդական աշխատավորական կուսակցությունը (ՔԱԿ), Իրանական Քուրդիստանը ներկայացնող երկու ազդեցիկ քաղաքական կուսակցություններ՝ Քուրդիստանի դեմոկրատական կուսակցությունը (ԶԴԿ) և Քուրդիստանի հայրենասիրական միությունը (ԶՅԿ)¹:

ՔԱԿ-ն քաղաքական կազմակերպություն է, որն ահաբեկչական գործողությունների միջոցով փորձում է Թուրքիայի քրդաբնակ տարածքներում մշակութային և քաղաքական ազատություն ապահովել: Քրդերը ստիպված էին սովորել թուրքալեզու դպրոցներում և խոսել թուրքերեն և՛ հասարակության մեջ և՛ ընտանիքի ներսում: Նրանք իրավունք չունեին արտասանելու քուրդ կամ Քուրդիստան անվանումները, ինչպես նաև երեխա ունենալու դեպքում վերջինիս պետք է կնքեին թուրքական անվամբ: Հազարավոր քրդեր ձերբակալվում էին այն մեղադրանքով, որ նրանք սպառնալիք են ներկայացնում երկրում հաստատված սոցիալական կարգի համար:

¹ Պետրոսյան Վ., Դեմոկրատական միության կուսակցության վերելքի պատճառները սիրիական զարգացումների համատեքստում, *Contemporary Eurasia*, Vol. 4, № 2, էջեր 11-50:

Քուրդ քաղաքական գործիչները զրկվում էին իրենց խորհրդարանական անձեռնմխելիության իրավունքից և բանտարկվում էին որպես ահաբեկիչներ: Ինչ վերաբերվում է քրդերին սատարող այլազգի անձանց, ապա լրագրողները և գիտնականները, ովքեր դարձել էին քրդական իրավունքի ջատագովներ, ազատվեցին աշխատանքից և հետապնդումների ենթարկվեցին՝ մեղադրվելով ահաբեկչության տարածմանը սատարելու մեջ: Վախի և հիասթափության այս մթնոլորտը, թուրքական անվտանգության ուժերի կողմից կիրառված բռնությունները, քրդական ինքնության հասարակական արտահայտման դեմ ճնշումները, քուրդ ժողովրդի իրավունքների ոտնահարումը առաջացնելով դժգոհությունների քուրդ բնակչության շրջանակներում, հանգեցրեց քրդերի արմատականացմանը ՔԱԿ խմբավորման մեջ: Կուսակցությունը հիմնվել է 1978 թ. Աբդուլահ Օջալանի կողմից մարքս-լենինիզմի գաղափարական սկզբունքների հիման վրա և նույնացվել է Իռլանդիայի հանրապետական բանակի և Պաղեստինի ազատագրման կազմակերպության հետ²: 1984 թվականից սկսած ՔԱԿ-ն բացահայտ զինված պայքար է մղում կառավարության դեմ՝ նպատակ ունենալով Թուրքիայի հարավարևելյան և Իրաքի հյուսիսարևմտյան մասերում ստեղծել քրդական պետություն: Այդ կուսակցությունը առաջ է քաշում քրդական պետության ստեղծման «դաշնային» սկզբունքը, որը ենթադրում է թուրք-քրդական, իրանա-քրդական և սիրիա-քրդական դաշնության ստեղծումը: Դա նշանակում է քրդական պետության ստեղծման պահանջ այսպես կոչված «էթնիկ Քրդստանի» շրջանակներում, ինչն իհարկե չի կարող ընդունելի լինել Թուրքիայի, Իրանի, Իրաքի և Սիրիայի համար³: Այսպիսով, ՔԱԿ-ն հանձն առավ անարդարությունների դեմ պայքարելու ազգայնական և մարքսիստական քաղաքականություն, որի նպատակն էր ռազմական և բռնի հաշվեհարդար տեսնել թուրք իշխանությունների հետ: Այս ռազմավարությունը գրավեց հազարավոր քրդերի ուշադրությունը ովքեր հետագայում դարձան խմբավորման անդամներ⁴:

1988թ. հետո թուրքական բանակի և ՔԱԿ զինյալների միջև բախումների

² Hanter M., Benson M., Cullen F., *Code of the Terrorists: The PKK and the Social Construction of Violence*, Spinger Nature, 2019, Vol. 27, № 3, pp. 393-419.

³ Բայբուրդյան Վ., Քրդական հարցի ներկա վիճակը և զարգացման միտումները, *Բանբեր Երևանի համալսարան. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն*, 2017, № 2, էջեր 3-18:

⁴ Hanter M., Benson M., Cullen F., *Նշված աշխատություն* pp. 393-419.

հետևանքով սպանվել է ավելի քան 40 հազար քուրդ և տասնյակ հազարավոր մարդիկ բռնի տեղահանվել են իրենց բնակավայրերից: 1980-1990 թթ. սիրիական կառավարությունն ապաստան է տվել ՔԱԿ-ին, և հազարավոր սիրիացի քրդեր դարձել են ՔԱԿ-ի անդամ, որի զինյալների շուրջ մեկ երրորդը սիրիացի քրդեր էին: 1990-ական թթ. Սիրիայի բացասական ռեժիմն ընդլայնեց ու մեծացրեց ՔԱԿ-ին ցուցաբերվող աջակցությունը և նույնիսկ անմիջականորեն խրախուսում էր Սիրիայի քրդերին՝ ՔԱԿ-ին միանալու և վերջինիս շարքերը համալրելու հարցում: Այդ գործընթացն ապահովելու և իր երկրի քրդերին համոզելու համար Սիրիայի ղեկավարությունը ՔԱԿ-ին միացած սիրիացի քրդերին նույնիսկ ազատում էր սիրիական բանակում ծառայելու պարտավորությունից: Մինչև 1998 թ. ՔԱԿ-ն Սիրիայում ուներ խոշոր հենակետ, որտեղ մարզվում էին նրա զինյալները⁵: 1998 թ. Աբդուլլահ Օջալանի Սիրիայից արտաքսվելուց և թուրքական հատուկ ստորաբաժանումների կողմից առևանգվելուց հետո Դեմոկրատական միության կուսակցության և ՔԱԿ հարաբերությունները առժամանակ լարված մնացին 1998-2011թթ. ընթացքում: 2011թ. Սիրիայում հակամարտության բռնկմանը զուգահեռ քրդական խոշորագույն կուսակցությունները սիրիական դաշտում ուղղորդվեցին միանգամայն տարբեր ուղղություններով՝ ՔԱԿ-ն իր մարդկային ու նյութական զգալի ռեսուրսներն ուղղեց դեպի Դեմոկրատական միություն կուսակցությանը (ԴՄԿ)՝ օգնելով վերջինիս ստեղծել իր ռազմական կառույցը՝ Քրդական ժողովրդի պաշտպանության ջոկատները (ՔԺՊՁ): Պատահական չէ, որ Դեմոկրատական միությունը 2012 թ. հուլիսի դրությամբ արդեն իսկ վերահսկողություն էր հաստատել Սիրիայի քրդաբնակ տարածքների մեծ մասի նկատմամբ⁶: 2015 թ. սեպտեմբերին Արֆրինից հարձակում էր իրականացվել թուրք զինվորականի վրա, հոկտեմբերի ամսին ՔԺՊՁ անդամների կողմից ստեղծվեց Սիրիական ժողովրդավարական զորքը (ՍԺՁ): 2016 թ. Թուրքիայի մայրաքաղաք Անկարայում տեղի ունեցավ ահաբեկչական հարձակում, որի արդյունքում սպանվեցին 34 հոգի: Այս հարձակումը իրականացվել էր Քրդական աշխատավոր կուսակցության ենթակայության տակ գտնվող Քրդստանի ազատության բազենների (ՔԱԲ)

⁵ *Բայբուրդյան Վ., նշված աշխատություն՝ էջեր 3-18*

⁶ *Պետրոսյան Վ., նշված աշխատություն՝ էջեր 11-50*

կողմից⁷: 2016 թ. կրկին ահաբեկչություն էր տեղի ունեցել Բեշիքթաշի օլլու թաղամասում, որի ժամանակ թիրախավորվել էին անվտանգության ծառայության պաշտոնատար անձինք և քաղաքացիները: Արդյունքում 46 մարդ սպանվել էր, իսկ 243-ը վիրավորվել: Ահաբեկիչը վերապատրաստվել էր ԴՄԿ-ի և ԹԺՊՁ-ի կողմից: 2016 թ. Ստամբուլում և Անկարայում տապալվեց մի խումբ զինծառայողների փորձը, ովքեր փորձում էին գրավել քաղաքացիական իշխանությունը, իսկ արդեն 2017 թ. ԴՄԿ-ն հռչակեց Սիրիայի Քրդական Ֆեդերացիայի ստեղծման մասին⁸: Թուրքիան ՔԱԿ-ն համարում էր ԹԺՊՁ գործընկեր և նրանց դասում ահաբեկիչների շարքին⁹: 2018 թ. հունվարի 20-ին ԹԺՊՁ կողմից վերահսկվող Աֆրին շրջանում Անկարան իրականացրեց «Չիթենու ճյուղ» ռազմական գործողությունը: Գործողության նպատակն էր չեզոքացնել Աֆրինում գտնվող Իսլամական պետության (ԻՊ) և ԹԺՊՁ ահաբեկիչներին, թուրքիայի սահմաններում անվտանգության և կայունություն ապահովման համար¹⁰: Առաջին և զլխավոր ռազմավարական նպատակն է վերացնել ՔԱԿ ներկայությունն ու ռազմական կարողությունները Եփրատ գետի արևմտյան մասում և ազատել դրա վերահսկողության տակ գտնվող տարածքները, ներառյալ Մանբիջը, որտեղ ԱՄՆ-ը և ՔԱԿ-ն միասին էին գործում: Այս գործողությամբ Անկարան նաև ճնշում կգործադրի ԱՄՆ վրա: Այսինքն Եփրատի ափում թուրքիայի ներկայությունը և ռազմական և քաղաքական մակարդակներում կճնշի ԱՄՆ-ին և ՔԱԿ-ին¹¹: 2018 թ. մարտին գործողությունն ավարտվեց, քանի որ Աֆրինի ողջ տարածաշրջանում վերահսկողությունը անցավ թուրքական զորքերին: 2019 թ. հոկտեմբերի 9-ին տարածաշրջանում ԱՄՆ զորքերի դուրսբերումից հետո մեկնարկեց «Խաղաղության գարուն» ռազմական գործողությունը Սիրիայի հյուսիսարևելյան հատվածում քրդերի կողմից վերահսկվող տարածքում: Թուրքական հարձակվողական գործողությունները նպատակ են հետապնդում հեռացնել ԹԺՊՁ և ԻՊ խմբերին և ստեղծել 32 կմ լայնությամբ և 480 կմ երկարությամբ

⁷ *Operation Olive Branch, TRT World Research Centre, 2018, pp.6-37.*

⁸ *Perchoc Ph., Turkey since the Failed July 2016 Coup, European Parliamentary Research Service, 2016, pp. 1-8.*

⁹ *Stanicek B., Turkey's Military Operation in Syria and its Impact on Relations with the EU, European Parliament, 2019, pp. 2-4.*

¹⁰ *Gurcan M., Assessing the Post-July 15 Turkish Military, Policy Notes, 2019, pp. 2-23.*

¹¹ *Yesiltas M., Turkey's Strategic Reasoning behind Operation Olive Branch, Seta Perspectives, 2018, № 34, pp.1-5.*

անվտանգության գոտի, որտեղ մտադիր են տեղափոխել թուրքիայում բնակվող մինչև երկու միլիոն սիրիացի փախստականների¹²: Թուրքիայի համար կենսական խնդիր է քրդական հարցի այս կամ այն ձևով հնարավորինս արագ լուծումը, քանի որ թուրքական կառավարող շրջանները գտնում են, որ դա ոչ միայն սպառնալիք է պետության անվտանգությանը այն ապակայունացնելու իմաստով, այլև կարող է հանգեցնել թուրքիայի փլուզմանը և երկրի տարածքի հսկայական մասի կորստին: Ընդ որում՝ թուրքիան սպառնալիք է համարում ոչ միայն իր երկրում, այլև հարևան պետություններում ապրող քրդերին: Ուստի Անկարան կենսականորեն շահագրգռված է զսպել քրդական նացիոնալիզմը ոչ միայն իր տարածքում, այլև Իրաքում, Սիրիայում և Իրանում: Նա առհասարակ աշխատում է խոչընդոտել որևէ տեսակի քրդական անկախ կամ ինքնավար տարածքային կազմավորման ստեղծումը: Իր վարքագծով ու գործելակերպով թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը ցույց է տալիս, որ ինքը հին թուրքական նացիոնալիզմի ուժեղ ազդեցության տակ է գտնվում: Հենց այդ պատճառով թուրքիայի քրդական քաղաքականությունը և առհասարակ արտաքին քաղաքականության կողմնորոշիչները խարսխված են նեոօսմանիզմի գաղափարախոսության վրա: Էրդողանի կառավարությունը մի կողմից ջանում է թույլ չտալ էթնիկ Քրդստանում քրդական նացիոնալիզմի վերելք, սակայն մյուս կողմից աշխատում է մեղմացնել իր հարաբերությունները ՔԱԿ-ի և առհասարակ քրդական ընդդիմության հետ:

Ներկայումս ոչ միայն քրդական պետականություն ստեղծելու հարցում, այլև պայքարի մարտավարության խնդրում քրդերի քաղաքական կուսակցությունների և կազմակերպությունների միջև միասնություն և ընդհանուր տեսակետ գոյություն չունի: Քրդական հասարակայնության մի ստվար մասը պահանջում է սահմանադրորեն ճանաչել թուրքիայի քրդերի էթնիկ, մշակութային և լեզվական իրավունքները, քրդերին շնորհել ինքնավարություն, որը ներառի այնպիսի բաղկացուցիչներ, ինչպիսիք են թուրքիայի վարչական համակարգի ապակենտրոնացումը և տեղական ինքնակառավարման մարմիններին լայն լիազորությունների տրամադրումը: Մեկ այլ խումբ պահանջում է թուրքիայից անջատում և լիակատար անկախություն և այլն: Քրդերի քաղաքական

¹² *European Asylum Support Office, Syria Actors, County of Origin Information Report, 2019. pp. 3-87.*

ապագայի վերաբերյալ տարբեր տեսակետներ ունեցող կուսակցությունների և խմբավորումների միջև դիմակայությունն ու առճակատունը ժամանակ առ ժամանակ վերածվում են եղբայրասպան զինված բախումների: Հենց դրանում է կայանում քրդական շարժման թուլությունը: Ինչ վերաբերվում է Օջալանին, ապա նա քրդական մտավորականությանը գրավելու նպատակով սկսեց դավանել սոցիալիստական-ազգայնական գաղափարների: Նա Սարմարա ծովի Իմրալի կղզու բանտում դատապարտված է ցմահ ազատազրկության: Նրա բացակայության ընթացքում կուսակցության գործունեությունը հիմնականում ղեկավարում են Օջալանի զինակիցներ Ջուրեյր Այդարը, Մուրադ Քարայլանը և Ջեմիլ Բայըքը:

Օջալանի քաղաքական հայացքները աչքի չեն ընկնում կայունությամբ: Դրանք հեղիեղուկ են և իրարամերժ: Դեռևս 2011 թ. նա հայտարարեց, որ ինքը առժամանակ դադարեցնում է ՔԱԿ-ի զինված պայքարը թուրքական իշխանությունների դեմ: Դրանից ելնելով թուրքական կառավարությունը փոխեց իր քաղաքականությունը ՔԱԿ-ի նկատմամբ: Բանտում նրան այցելեց թուրքական պատվիրակությունը, որի հետ Օջալանը իբր եկել էր որոշակի համաձայնության և կնքել ինչոր համաձայնագիր քրդական հարցի վերաբերյալ: Սակայն Ափոյի (այդպես են քրդերն անվանում իրենց առաջնորդին) շփումները Էրդողանի կառավարության հետ դեռևս ոչ մի բան չի նշանակում: Ավելին, ՔԱԿ-ի գործիչները Թուրքիայի ղեկավարության նմանատիպ քայլերը գնահատում են որպես Ա. Օջալանին էլ ավելի մեկուսացնելու փորձ: Առհասարակ, քրդական քաղաքական շարժման առաջնորդը հաճախ է փոխում իր տեսակետները, իսկ նրա կուսակցության ծրագրային փաստաթղթերում բացակայում է իրապաշտությունը, իսկ երբեմն նաև պատմական իրողության հետ հաշվի նստելու հանգամանքը: ՔԱԿ-ը հավակնություն ունի ազգային քաղաքական գործերում միանձնյա ղեկավարության: Ուստի քրդական բոլոր մնացած կուսակցություններին ու կազմակերպություններին հայտարարեց համաձայնողական, օպորտունիստական, իսկ երբեմն նույնիսկ քուրդ ժողովրդի ազգային իղձերը ոտնահարող ու մերժող, որոնց դեմ անհրաժեշտ է մղել անզիջում պայքար: Նման մարտավարությունը, երբ ՔԱԿ-ը քրդական շարժման մեջ ձեռք է բերել համարյա մենաշնորհային դիրքեր, էապես թուլացնում է այդ շարժումը: ՔԱԿ-ը ծրագրային փաստաթղթերում իրեն հայտարարում է տարածաշրջանի բոլոր ժո-

ղովուրդների ազատության գաղափարի ջատագով: Սակայն դրանցում ոչ մի տեղ հիշատակություն չկա Արևմտյան Հայաստանի նկատմամբ հայ ժողովրդի իրավունքների վերաբերյալ կամ այդ գործին քրդերի կողմից թելուզ որևէ կերպ նպաստելու մասին: Ընդհակառակը, Արևմտյան Հայաստանի տարածքներն ընդգրկված են ՔԱԿ-ի քաղաքական պահանջները ներառող այսպես կոչված «Քրդստանի» աշխարհագրական սահմանների մեջ: Առհասարակ հայտնի չէ քրդական որևէ կուսակցություն կամ լուրջ կազմակերպություն, որն այդ հարցում ունենա այլ տեսակետ: Ինչ վերաբերում է բոլոր տեսակի և գույնի քուրդ ազգայնականներին, ապա նրանք բոլորն անխտիր Արևմտյան Հայաստանն անվանում են Քրդստան: Նրանք Արևմտյան Հայաստանի տարածքում ապրող քուրդ բնակչությանն անվանում են տեղաբնիկ (ավտոխտոն), որ իր քրդերը անհիշելի ժամանակներից ապրում են իրենց «պապենական հողերում»¹³:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բայբուրդյան Վ., Քրդական հարցի ներկա վիճակը և զարգացման միտումները, Բանբեր Երևանի համալսարան. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն, 2017, № 2, էջեր 3-18:
2. Պետրոսյան Վ., Դեմոկրատական միության կուսակցության վերելքի պատճառները սիրիական զարգացումների համատեքստում, *Contemporary Eurasia*, Vol. 4, № 2, էջեր 11-50:
3. Hanter M., Benson M., Cullen F., Code of the Terrorists: The PKK and the Social Construction of Violence, *Spinger Nature*, 2019, Vol. 27, № 3, pp. 393-419.
4. Stanicek B., Turkey's Military Operation in Syria and its Impact on Relations with the EU, *European Parliament*, 2019, pp. 2-4.
5. European Asylum Support Office, Syria Actors, *County of Origin Information Report*, 2019. pp. 3-87.
6. Yesiltas M., Turkey's Strategic Reasoning behind Operation Olive Branch, *Seta Perspectives*, 2018, № 34, pp.1-5.
7. Operation Olive Branch, *TRT World Research Centre*, 2018, pp.6-37.
8. Perchoc Ph., Turkey since the Failed July 2016 Coup, *European Parliamentary Research Service*, 2016, pp. 1-8.

¹³ Բայբուրդյան Վ., նշված աշխատություն՝ էջեր 3-18

РАБОЧАЯ ПАРТИЯ КУРДИСТАНА: ЛОКАЛЬНАЯ ТЕРРОРИСТИЧЕСКАЯ ОРГАНИЗАЦИЯ ИЛИ ПОЛИТИЧЕСКАЯ ЕДИНИЦА?

М.Е. Маилян

АННОТАЦИЯ

В статье представлены исторические, идеологические основы, цели, проблемы Рабочей партии Курдистана- локальной террористической организации, расположенной в Турции, а также политика Турецкого правительства против ее деятельности. Вовлечение курдов в сирийский конфликт стало возможностью укрепить их позиции в регионе. Именно этот аспект становится основой политики Турции, направленной на предотвращение продвижения курдов.

***Ключевые слова:** локальный терроризм, курды, РПК, сирийский конфликт.*

KURDISTAN WORKERS PARTY: LOCAL TERRORIST ORGANIZATION OR POLITICAL UNIT?

М.Е. Mayilyan

SUMMARY

Article represents the Turkish government policy against the activities of the local terrorist organization Kurdish Workers' Party, the latter's historical, ideological bases, goals and challenges. The involvement of Kurds in the Syrian conflict became an opportunity to strengthen their position in the region. Turkey's policy aims to prevent the Kurds' advancement.

***Key words:** Local terrorism, Kurds, KWP, Syrian conflict.*